

ձայնէր Կարլ Մարքսի միջազգայնականութեան հետ եւ ծնունդը կուտար ապագայ սխնիրձին:

Իսրայէլ երբեք իր յոյսը կորսնցուցած չէ, իր աշխատի հալածական կեանքին մէջ, թէ ան օր մը աշխարհի փրկիչը պիտի ծնի. մարդարէններու քարոզած աս յոյսը ան օրական երեք անգամ իր ազօթքներով կը վերլիչէ: Հէսի դադափարները մեծ հետաքրքրութիւն արթնցուցին ամենուրեք եւ Օղեսացի բժիշկ մը Լէօ Պինսկէր 1882-ին հրատարակեց զբոյժ մը, որուն մէջ կ'ըսէր.

«Հրէան մեռեալ մըն է կենդանիներուն համար, օտարական մը բնիկներուն համար եւ վաչկատուն մը նստակեացներուն համար: Ան կ'ամբաստանուի իրր մուրացկան հարուստներու կողմէ եւ իրր մեծահարուստ ազգասիրներուն կողմէ: Ան կը նկատուի անհայրենիք ազգայնականներու կողմէ եւ օտարատեաց բնիկը վարականներու կողմէ: Մէկ խօսքով՝ ան խոտելի տարր մըն է ժողովուրդի ամէն դասակարգերուն համար: Անոր հայրենիքը արտասահմանն է: Անոր միութիւնը ցրուումն է եւ զէնքը՝ նուաստացումը: Հրէայի ճարպիկութիւնը վախուստն է եւ անոր միակ կարողութիւնը՝ միջավայրին պատշաճեցումը» եւ այլն:

Ռեբմը, կ'ըսէր Պինսկէր, հրէան աղքատութեան մէջ կը կազմէ օտարամուտ տարր մը, որ ընդունակ չէ ձուլուելու եւ այդ պատճառով իսկ անհանդուրժելի է անոնց: Պէտք է ուրեմն, որ անոնք դադրեն ուրիշ երկրամաս մը եւ ազատեն Եւրոպան անախորժ ներկայութենէ մը:

Ո՛ւր պէտք է երթան սակայն, Պինսկէր չէր որոշեր, թէ եւ ամէնքին աչքը երուսաղէմին ուղղուած էին:

Շատ մը հրէայ ուսանողներ թողին Ռուսաստանը եւ գնացին Պաղեստին: Բայց առանց ռեւէ կանխապատրաստութեան՝ անոնց յառաջացուցած այս շարժումը չէր կրնար իրականացնել Պինսկէրի երազը:

«Սիւնի Սիրահար»ներու այս առաջին փորձը դատապարտուած էր վիժելու, որովհե-

տեւ հիմնուած էր զգացման եւ երեւակայութեան վրայ առանց ռեւէ դրական հիմքի:

Այսօր սակայն այդ երազն իրականացած է արդէն հազիւ կէս դար անցած: Հէսի եւ Պինսկէրի երեւակայած հայրենիքն իրապէս գոյութեան կոչուած է այսօր մայր հայրենիքի մէջ, Սողոմոնի տաճարի աւերակներու ստորոտին, եւ ինչ որ տարօրինակ է, Իսրայէլի վերագործն իր նախնեաց բնակավայրը, տեղի ունեցաւ իրր հետեւանք մարդարէններու գուշակած վիթխարի վերելայրումներու...

Հէսի եւ Պինսկէրի գաղափարներն սկիզբէն մնացին իրր ուսանողի մը սենեակին մէջ պըլ-պըլացող կայծեր: Անոնց գիրքերը մնացին իրր գրադարանի պարզ առարկաներ, մինչեւ որ Թէոդոր Հէրցլ — Բուդապէստի հարուստ հրէայի մը զաւակը — կեանք տուաւ անոնց իր հզօր տաղանդով եւ անխոնջ գործունէութեամբ:

1890-ին ան կը բնակէր Փարիզ. հակասեմականութիւնը պատմական յիշատակ մըն էր միայն եւ Հէրցլ կը խորհէր, թէ Հէսի եւ Պինսկէր անիրաւ են հրէայ ազգն այլուր փոխադրելու իրենց ցանկութեանը մէջ:

1895-ին ծագեցաւ Տրէյֆլիւսի խնդիրը, որ նոր թափով մը մէջտեղ հանեց նախկին առեւտրութիւնն հրէաներու հանդէպ եւ արծարծուելով թունդ ազգայնական եւ կղերամօլ մամուլի մը կողմէ, առիթ տուաւ ամենաազգեղ փրօփաղանտի մը հրէայ տարրին դէմ:

Ճիշդ հարիւր տարի անցեր էր Փրանսական մեծ յեղափոխութենէն, որ առաջին անգամ հրատարակած էր հրէաներու քաղաքացիական հաւասարութիւնը Մարգու Իրաւանց Դաշինքով: Հէրցլ, որ տարուած էր միջազգայնական հոսանքէն, սթափեցաւ յանկարծ եւ խորհեցաւ, թէ եթէ Փրանսացիին պէս բարձր քաղաքակրթութեամբ ժողովուրդ մը կրնայ այսպէս մէկ օրէն միւսը ոչխարի հօտերու նման տարուել կողմնակալ եւ խաւարամիտ մամուլէ մը, ի՞նչ պէտք է խորհիլ այն աղքատ մասին, որոնք Ֆրանսայի 100 տարի առաջուան քաղաքակրթութեան իսկ հասած չեն տակաւին: Տը-